# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/05» ծածկագրով **«աղբատար մեքենաների և աղբամանների»** ձեռքբերման
գնման ընթացակարգի
**«Հրավերի վերաբերյալ պարզաբանում տրամադրելու նիստի»**

**«11» սեպտեմբերի 2023 թ.**

**ք. Էջմիածին**

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ա. Հովհաննիսյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ինժեներ՝ Հ. Կուրղինյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ - շինարար՝ Ռ. Երվանդյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ - շինարար՝ Գ. Հովհաննիսյան

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ Խ. Զազյան

**Հանձնաժողովի քարտուղար**

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Լ. Քալաշյան

1. Հրավերի վերաբերյալ պարզաբանում տալու մասին

**1.1 «ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/05»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 09.09.2023 թ. ստացվել է հետևյալ հարցադրումը.

**Հարցադրում 1**

Արմավիրի Մարզպետարանի աշխատակազմի կողմից 30.08.2023թ. հրապարակված թիվ ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/05 էլեկտրոնային աճուրդի հայտարարության 4-րդ լոտի տեխնիկական բնութագիրը արված է ակնհայտ ուղղորդումով դեպի գերմանական «ESE» ապրանքանիշի «SPLIT LID» մոդելի աղբամանները, տեխնիկական բնութագրում նշված և պատկերված թե չափերը և թե գծագրերը որից որ արտագրվել են տեխպայմանում նշված չափսերը վերցված են վերոնշյալ գործարանի կայքից, հղումը https://www.ese.com/ru/home/produkte/produktfinder/detail-seite-produktfinder/?tx_dmeseproductfinder_pi1[productID]=453 Աղմբաանների տեխնիկական բնութագրում նշված են մի շարք ստանդարտների համապատասխանության պահանջներ, այն է EN 840, RAL-GZ և ISO 9001 որոնք սահմանում են տվյալ աղբամանների ֆիզիկական չափսերը, համապատասխանությունը բեռնատարների բարձրացնող մեխանիզմների հետ, և այլ պարամետրեր: Սակայն, մրցույթի տեխնիկական բնութագրում, իրականացված են ստանդարտների պահանջվող պարամետրերի էլ ավելի խիստ սահմանափակումներ, որոնք ի վերջո ստանդարտացված արտադրանքի մատակարարման հնարավորությունը սահմանափակում են մեկ մատակարարի, մեկ գործարանի միայն մեկ մոդելով, որը ակնհայտ հանդիսանում է «Գնումների Մասին» օրենքի 1ին մասի 3րդ հոդվածի կոպիտ խախտում, այն է միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը: Ուստի խնդրում ենք հրավերում փոփոխել տեխնիկական բնութագիրը, համապատասխանեցնելով այն ստանդարտներին և ապահովելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը: Անդրադառնանք կոնկրետ օրինակների՝ Ստորև՝ տեխնիկական բնութագրից մեջբերումներ, մեր մեկնաբանություններով 1. Տեխնիկական բնութագրի գծագրեր և պատկեր Վերցված է ESE գործարանի կայքից, հղումը՝ https://www.ese.com/ru/home/produkte/produktfinder/detail-seite-produktfinder/?tx_dmeseproductfinder_pi1[productID]=453 2. Տեխնիկական բնութագրի հիմնական չափեր Մեջբերում՝ «Աղբարկղին ներկայացվող ընդհանուր պահանջները. 1100 լ տարողությամբ պլաստմասե աղբարկղ՝ վրադիր կափարիչով, որը պետք է բավարարի հետևյալ պահանջներին. Ծավալը՝ ոչ պակաս 1100 լ, Երկարությունը՝ 1260 մմ (+/- 2), Երկարությունը՝ 1377 մմ (+/- 2), ներառյալ աղբատարի մանիպուլյատորի համար նախատեսված բռնակները, Խորությունը (լայնությունը)՝ 1075 մմ (+/- 2), Բարձրությունը՝ 1355 մմ (+/- 2), Վրադիր կափարիչը՝ (260 x 1110) մմ (+/- 2» EN840-2:2012 ստանդարտը սահմանում է 1100 լ տարողությամբ պլաստմասե աղբարկղի հետևյալ չափերը՝ ի տարբերություն տեխնիկական բնութագրում նշվածի Տեխնիկական բնութագիր՝ • Երկարությունը՝1260 մմ (+/- 2), • Երկարությունը՝ ներառյալ աղբատարի մանիպուլյատորի համար նախատեսված բռնակները՝ 1377 մմ (+/- 2), •

Խորությունը (լայնությունը)՝ 1075 մմ (+/- 2), • Բարձրությունը՝1355 մմ (+/- 2), • Վրադիր կափարիչը՝(260 x 1110) մմ (+/- 2), EN840-2:2012 ստանդարտը՝ • Երկարությունը՝< 1275 մմ • Երկարությունը՝ ներառյալ աղբատարի մանիպուլյատորի համար նախատեսված բռնակները՝ 1370 մմ (+/- 10), • Խորությունը (լայնությունը)՝ < 1115 մմ • Բարձրությունը՝< 1470 մմ • Վրադիր կափարիչը՝ Ստանդարտով վրադիր կափարիչի չափ սահմանված չէ, նշված չափով վրադիր կափարիչով աղբաման արտադրում է միայն ESE գործարանը Ինչպես ակնհայտորեն երևում է նշված աղյուսակից՝ տեղի է ունենում ստանդարտի պահանջների անիմաստ նեղացում, որը չազդելով աղբամանների ստանդարտացման վրա՝ ուղղված է միայն և միայն մատակարարվող ապրանքի արտադրողի սահմանափակմանը:
3. Տեխնիկական բնութագրի այլ բնութագրեր Մեջբերում՝ «Քաշը՝ 50 կգ (+/- 2) Բեռնատարողությունը՝ ոչ պակաս 510 կգ-ից, ներառյալ՝ աղբարկղի քաշը» EN840-2:2012 ստանդարտը պահանջում է աղբամանների բեռնատարողություն, ելնելով աղբամանի ծավալի մեկ լիտրի համար 0.4 կգ բեռնվածության, հետևաբար 1100լ աղբամանների համար ըստ ստանդարտի պահանջվող բեռնատարողությունը կազմում է 440 կգ (չներառելով աղբամանի քաշը): Այս պահանջը նույնպես միտված է միայն հնարավոր մասնակիցների սահմանափակմանը, քանի որ EN840-2:2012 ստանդարտը պահանջում է 1100լ աղբամանի համար 440 կգ բեռնատարողություն, արտադրող գործարանները մեծամասնությունը սերտիֆիկացրել է իր արտադրանքը ելնելով 440կգ պահանջից, 510կգ (կամ որ նույնն է 460 +/- 2 կգ առանց աղբամանի քաշի) բեռնատարողությունը չնայած որ փաստացի բավարարվում է բազմաթիվ արտադրողների կողմից, սակայն այդ արտադրողները չունեն համապատասխան սերտիֆիկատ, և ոչ էլ կարող են ունենալ ստանդարտի պահանջներից չբխող ուղղորդված մրցույթների բոլոր հնարավոր սահմանափակումների համար հավաստագրեր:

**1.2 «ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/05»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 09.09.2023 թ. ստացված հարցադրմանը տրամադրել պարզաբանում հետևյալ բովանդակությամբ.

**Պարզաբանում 1**

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Այս մասով անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել, որ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է, միտված է առաջացած կարիքի երկարաժամկետ և համապարփակ բավարարմանը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Այս մասով անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել, որ գնման առարկան առավել մանրամասն նկարագրելն անհնար կլիներ առանց դրան տրված ստանդարտների և սերտիֆիկատների ներկայացման:

ՀՀ Կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 22-րդ կետի համաձայն ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը: Այս մասով անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված հղումներն օգտագործվել են որպես համարժեք առաջարկվող ապրանքի ակնառու օրինակ:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը խտրական չեն, չեն սահմանափակում հնարավոր մրցակցությունը, թափանցիկ է, համաչափ և հրապարակային:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 30.08.2023 թ. հրապարակված **«ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/05»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 4-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը փոփոխելու պահանջը մերժվում է:

**Ընդունվում է որոշում՝ 5 կողմ, 0 դեմ:**

**2.** Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

**Հանձնաժողովի նախագահ՝**
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ա. Հովհաննիսյան

**Հանձնաժողովի անդամներ՝**
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ինժեներ՝ Հ. Կուրղինյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ - շինարար՝ Ռ. Երվանդյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ - շինարար՝ Գ. Հովհաննիսյան

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի
աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ Խ. Զազյան

**Հանձնաժողովի քարտուղար**
ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի
աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Լ. Քալաշյան